

սաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպերանաց, յետ այնորիկ տենչացեալ կարգի վանականութեան՝ երթայ ի վանս բազմութեան եղբարց, եւ ընկալեալ զկերպարանս վանականութեան՝ լինէր ընտիր² յամենայնի եւ երեւելի. հրաժարեր յամենայն աշխարհագրաւս երկրաւոր զբաղմանց: 3 Ապա յանապատական³ կրաւնս փոխեալ՝ զարմանալի երեւեր եւ հռչակաւոր. եւ կայր յանապատս ի բազում տեղիս քարանձաւաց, մեծաւ առաքինութեամբ եւ խստամբեր վարիւք, բազում եւ այլ սուրբ վարուք կրաւնաւորաւք եւ աղաւթասեր եղբարքք, մինչեւ յամս հինգերորդ՝ արքային Յայոց Վռամշապիոյ եղբար խոսորովու: 4 Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեալ՝ ի պատմութենէ գրոյց առն ցանկալի կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա եւ զիր հայերէն նշանագրացն, թէ ե՛րբ կամ ո՛ր եւ կամ յո՛ր ուրուք ձեռն գտանէ, թագաւորին⁴ Յայոց Վռամշապիոյ ջերմեռանդն ինտրելով. զոր կարգեաց գրելով ճմարտապէս յառաջագրեալ այրն հոգեւոր Կորիւն. ուստի եւ մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեալ:

5 Եւ այսպէս ⁵բազմաժամանակեայ մտածութիւնն երանելոյ առն Մաշտոցի ընկալեալ յամենախնամ մարդասիրէն Աստուծոյ՝ զաւրացոյց զնա հոգով ողորմութեան իւրոյ: 6 Քանզի հոգացեալ յարաժամ տրտմեր երանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն եւ զառաւելապէս ծախս⁶ մանկանցն⁷ Յայաստան աշխարհիս. որք բազում թռչակաւք եւ հեռագնաց ճանապարհաւք եւ բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան: 7 Քանզի պաշտաւն եկեղեցւոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել եւ աւգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, ⁸եւ լինէր պաշտաւնէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորւոյ: 8 Չայս ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելի առն Մաշտոցի, եւ փղծկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է՝ ինքեան ձայնիւ, եւ ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանանց առ հա-

1 Ձ. զվճռացն

2 Ձ. ընդիր

3 Ձ. յանապական

4 ԲՁ. օգնականութեամբ թագաւորին

5 Ձ. զբազմաժամանակեայ. թերեւս՝ զբազմաժամանակեայ մտածութիւնն... ընկալեալ ամենախնամ մարդասիրին...

6 ՏՏ. զմեծաջան ծախս

7 Ձ. մանգանցն

8 ՏՏ. չիք եւ լինէր... անշահութիւն